ՀՀ-Ի ԵՎ ԳԴՀ-Ի ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Ա. Վ.

Հայաստանի երրորդ Հանրապետության կազմավորումից հետո նորանկախ պետության և նրա երիտասարդ դիվանագիտության առաջնահերթ խնդիրն էր ձեռք բերել միջազգային ճանաչում առաջին հերթին մեծ տերությունների, ապա նաև փոքր, հարևան և հեռավոր երկրների կողմից: Ընդհանրապես, միջազգային ճանաչումը խիստ անհրաժեշտ է ու հրատապ բոլոր նորաստեղծ պետությունների համար, որով նրանք զգալիորեն ամրապնդում են իրենց դիրքերը միջազգային հարաբերությունների համակարգում՝ որպես համաշխարհային և համաեվրոպական կառույցների լիիրավ սուբյեկտներ:

Համաշխարհային հանրության կողմից Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչմանը լրջորեն խոչընդոտում էր նորաստեղծ պետության ներքին և արտաքին քաղաքական բարդ իրավիճակը՝ երկրաշարժի հետևանքները, ներքաղաքական անկայունությունը, սոցիալական ծանր խնդիրները, բնակչության կենսամակարդակի կտրուկ անկումը, շրջափակումը Թուրքիայի կողմից, Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները ոչ միայն Արցախի, այլև ՀՀ-ի դեմ: Այս առումով օրակարգի հարց էր ՀՀ ամենաբարձր պետական այրերի և դիվանագետների պաշտոնական հանդիպումները մի շարք երկրների գործընկեր բարձրաստիճան ղեկավարների և արտաքին քաղաքական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ, որոնք տվեցին դրական լուծում և փայլուն արդյունք:

Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն ընձեռվեց իր ներկայացուցիչներն ունենալ ոչ միայն «դե յուրե» ճանաչած երկրներում, այլև միջազգային բազմաթիվ կազմակերպություններում, որը ստեղծեց բարենպաստ պայմաններ այդ երկրներում և կառույցներում՝ պաշտպանելու Հայաստանի ազգային պետական շահերը, ներկայացնելու նրա արտաքին քաղաքականության հետապնդած նպատակները:

Շուրջ մեկուկես տասնամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետությունն այս ոլորտում հասավ նկատելի հաջողությունների. նա դիվանագիտական հարաբերություններ հաստատեց աշխարհի ավելի քան 128 երկրրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Արգենտինայի, Ուրուգվայի, Կիպրոսի, Հունաստանի, Անգլիայի, Իտալիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Պարսկաստանի, Եգիպտոսի, Սիրիայի և այլ պետությունների, ինչպես նաև ԱՊՀ բոլոր հանրապետությունների (բացառությամբ Ադրբեջանի) հետ և դարձավ միջազգային կառույցների լիիրավ անդամ:

ՀՀ-ն դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության՝ Եվրախորհրդի և Եվրամիության

ազդեցիկ և հեղինակավոր տերության հետ, որը կարևոր դեր է խաղում համաշխարհային քաղաքականության ասպարեզում[1]:

1992 թ. մարտի 2-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց ՄԱԿ-ին[2], 2001 թ. հունվարի 25-ին՝ Եվրախորհրդին[3]: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը դարձավ Հայաստանի Հանրապետության անկախությունն առաջին ճանաչողներից մեկը, որը կարևորագույն քայլ էր դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար: Ակնհայտ են հայ դիվանագիտության արտաքին քաղաքականության անվիճելի հաջողությունները միջազգային հարաբերությունների համակարգում: Դա ոչ միայն Հայաստանի պետական-պաշտոնական մարմինների և հայ դիվանագետների ճկուն քաղաքականության արդյունքն էր միջազգային հարաբերությունների համակարգում, այլև երկրի ներսում ներքաղաքական կայունացման, հայկական սփյուռքի գործունեության հետևանք:

ՀՀ-ի և ԳԴՀ-ի դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը նախորդել են տարբեր մակարդակի երկկողմանի բազմաթիվ պաշտոնական և ոչ պաշտոնական այցելություններ, որոնց ընթացքում քննարկվել են ինչպես համաեվրոպական հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ, այնպես էլ հատկապես երկու երկրների համար հրատապ պաշտոնական ճանաչման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման հիմնահարցեր:

Հանրահայտ է, որ Գերմանիայի միավորումն ավելի ամրապնդեց նրա դիրքերը Եվրոպայում և բարձրացրեց նրա կարգավիճակը միջազգային ասպարեզում: Գերմանիայի միավորմամբ իրագործվեց գերմանական ժողովրդի շուրջ կեսդարյա իղձը[4]:

1991 թ. դեկտեմբերին արդեն միավորված Գերմանիան պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախությունը, իսկ 1992 թ. հունվարի 31-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին ԳԴՀ-ի և ՀՀ-ի միջև: Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնության միջև միջպետական մակարդակով հարաբերությունների հաստատումը և «դե յուրե» ճանաչումը սկզբունքորեն նոր էջ բացեցին երկու երկրների քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում, քանզի երկու ժողովուրդների փոխհարաբերությունները սկսեցին զարգանալ առանց միջնորդավորվածության՝ որպես միջազգային իրավունքի նորմերին համապատասխան հավասար սուբյեկտներ և միջազգային հարաբերությունների համակարգում լիիրավ անդամներ: Դրանից հետո սկսվեցին միջխորհրդարանական շփումները, որոնք ստեղծեցին իրավաքաղաքական անհրաժեշտ նախադրյալներ հայ-գերմանական բարձր մակարդակով հանդիպումների համար: Այսպես, 1992 թ. մայիսի 4-11-ը ԳԴՀ Բունդեսթագի նախագահ Ռիտա Զյուսմուտի հրավերով պաշտոնական այցով Գերմա-

---

[1] *40 (Vierzig) Jahre Außenpolitik der Bundesrepublik Deutschland: eine Dokumentation, hrsg. vom Auswärtigen Amt.- Stuttgart: BONN AKTUELL; Landsberg: Moderne Verl.-Ges., 1989, S. 824.*

[2] ՄԱԿ-ը Ձեզ համար, Ե., 2001, էջ 28-29:

[3] *ADK, Nr. 113 Jg. 2001/ Heft 3, S. 14-15.*

[4] Տե՛ս Ватлин А., *Германия в XX веке, М., 2002, с. 336.*

նիայում էր ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանի գլխավորած պատվիրակությունը, 1993 թ. ԳԴՀ է այցելել ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանը: 1999 թ. սեպտեմբերի 3-8-ը Գերմանիայի խորհրդարանի՝ Բունդեսթագի և Բունդեսռաթի հիմնադրման 50-ամյակի հոբելյանի տոնակատարություններին մասնակցելու նպատակով Բունդեսթագի նախագահ Ռոլանդ Կոխի հրավերով Գերմանիայում էր գտնվում ՀՀ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանի գլխավորած խորհրդարանական պատվիրակությունը: Այցի ընթացքում հանդիպումներ տեղի ունեցան խորհրդարանի պալատների ղեկավարների, նախագահ Յոհաննես Ռաուի, փոխվարչապետ, արտգործնախարար Յոշկա Ֆիշերի և պաշտոնատար այլ անձանց հետ: Բունդեսթագի նախագահի մասնակցությամբ հանդիպում տեղի ունեցավ նաև Կարեն Դեմիրճյանի և Ադրբեջանի Մեջլիսի նախագահ Մուրթուզ Ալեսկերովի միջև[5]:

Ուշագրավ են նաև Գերմանիայի բարձրաստիճան պաշտոնյաների այցելությունները: Հայաստանում են եղել ԳԴՀ ԱԳ նախարարներ Կ. Քինկելը՝ 1995 թ. դեկտեմբերին, Յո. Ֆիշերը՝ 2004 թ. ապրիլի 22-ին: 1996 թ. մարտին, 2000 թ. մայիսին և 2001 թ. հոկտեմբերին Հայաստան են այցելել համապատասխանաբար ԳԴՀ Բունդեսթագի փոխնախագահներ Հ. Քլայնը, տիկին Ա. Ֆուքսը և Ս. Ֆոլմերը: Այսպիսով, վերջին տարիներին ակնառու է Գերմանիայի խորհրդարանականների 2000 թ. մայիսի 2-5-ին հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ: Այդ է վկայում նաև Բունդեսթագի նախկին փոխնախագահ, Բունդեսթագի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Հ-Ու. Քլոզեի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

Հետաքրքիր են Քլոզեի այցին տրված որոշ գնահատականները պատվիրակության անդամ, Բունդեսթագի արտաքին գործերի հանձնաժողովի գրասենյակի ղեկավար Ռ. Չենիեկի կողմից: Նրա վկայությամբ, Քլոզեն պատվիրակության մտահոգությունների մասին անձամբ զեկուցել է ԳԴՀ վարչապետ Գ. Շրյոդերին և նշել հարավկովկասյան տարածաշրջանի և առանձին պետությունների ընդհանուր անկայունության, նրանց միջև համագործակցության իսպառ բացակայության, Մոսկվայի կողմից ճնշամիջոցների գործադրման մասին, որոնք թեև չափազանցված են, բայց հեռու չեն ճշմարտությունից: Հաշվի առնելով այն, որ Վիլլի Վիմմերը և Դիտրիխ Շպեռլինգը նախկինում հաճախ են այցելել Հայաստան, նրանց գործունեությունը դարձավ նպաստող քաղաքական գործոն հայ-գերմանական միջպետական առնչությունների հետագա զարգացման համար:

Վ. Վիմմերն աչքի ընկնող քաղաքական գործիչ է, ներկայացնում է Քրիստոնեա-դեմոկրատական միությունը, Բունդեսթագի Գերմանակովկասյան խմբի անդամ է, երկար տարիներ եղել է «Կովկաս» պատգամավորական խմբի նախագահ, Գերմանիայի կարևորագույն քաղաքական կուսակցություններից մեկի՝ Քրիստոնեա-դեմոկրատական միության անդրկովկասյան տարածաշրջանի պատասխանատուն:

[5] Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն. 1999, Ներքին, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն, Ե., 2002, էջ 108:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վերջին յոթ-ութ տարիներին Վ. Վիմմերն անձնական ակտիվ մասնակցություն է ունեցել հայ-գերմանական երկխոսության կայացման գործընթացում. նրա գնահատմամբ, այդ ժամանակաընթացքում «բազմիցս վառել է մատները»: Նա իր անուրանալի ավանդն ունի անդրկովկասյան տարածաշրջանի երկրների, դրանց թվում՝ Հայաստանի պաշտոնական քաղաքականության մշակման ոլորտում:

Վ. Վիմմերը գտնում է, որ ԱՊՀ բոլոր երկրների, այդ թվում նաև՝ Հայաստանի նկատմամբ Գերմանիան ունի դիրքորոշման համարժեք չափանիշներ՝ ուղղված կայունության և ժողովրդավարության ձևավորմանը. միջպետական հարաբերություններում նա կարևորում է բնական համակրանքը: Վ. Վիմմերը Հայաստան է այցելել 1996 թ. նոյեմբերին, այնուհետև՝ 1998 թ. սեպտեմբերին: Վերջին այցելության ժամանակ նրա գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ Նախագահի, վարչապետի, ԱԺ խոսնակի, արտաքին գործերի և այլ նախարարների հետ: Սակայն նրա ռազմավարությունը և մարտավարությունը ղարաբաղյան հիմնահարցում, մեղմ ասած, խիստ խոցելի են և անընդունելի: Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վիմմերյան տեսակետից Հայաստանը պետք է ընտրություն կատարի ինքնավարության մոտիվների միջև՝ հիմք ընդունելով Լիսաբոնում ընդունված բանաձևը, որը որդեգրել են եվրոպական բոլոր երկրները: Լիսաբոնյան խորհրդաժողովից հետո միջազգային-քաղաքական կյանքում արցախյան հիմնահարցի շուրջ քաղաքական շատ ջրեր են հոսել, արմատապես փոխվել են տերությունների մոտեցումները, ուստի և Վիմմերի տեսակետը արդեն ժամանակավրեպ է:

Դեռևս 1997 թ. մայիսի 15-ին Բոննում սեմինար է անցկացվել «Հակամարտությունների շուրջ տարվող աշխատանքը և ճգնաժամերի կարգավորումը Անդրկովկասյան տարածաշրջանում» թեմայով: Սեմինարում ունեցած իր ելույթում Վ. Վիմմերն ընդգծեց, որ «Գերմանիան անաչառ է ղարաբաղյան հակամարտության հարցում, և հենց այդ պատճառով է, որ գերմանացիներին թույլ չտրվեց ստանձնելու «ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահությունը»: Դա ԳԴՀ-ի արտաքին գործերի նախկին նախարարի՝ Կ. Քինկելի շատ անգամ հայտնած տեսակետի կրկնությունն է Վիմմերի կողմից: ՀՀ-ն շահագրգռված է, որ Մինսկի խմբի անդամները լինեն անկողմնակալ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործում, և այս առումով, եթե Գերմանիան իսկապես գրավեր նման դիրքորոշում, պաշտոնական Երևանն ուղղակի կողջուներ նրա մասնակցությունը և դերակատարումը: Թեև Գերմանիան Մինսկի խմբի համանախագահ երկրներից չէ, այլ հիմնադիր անդամ, այնուամենայնիվ, իր քաղաքական ազդեցությամբ, որպես Եվրոպայի ամենաազդեցիկ պետություններից մեկը, կարող է նպաստել հիմնախնդրի կարգավորման գործընթացներին:

Բոննի նստաշրջանի նախօրյակին ՆԱՏՕ-ի ընդլայնման վերաբերյալ ձեռք բերվեց սկզբունքային համաձայնություն Արևմուտքի և Ռուսաստանի միջև: Այդ համաձայնությունը երաշխիք է Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգության համար: Գերմանիայի համար ներկա պայմաններում շահեկան է այն, որ ամրապնդվեն անդրկովկասյան նորանկախ պետությունների ինքնիշխանությունը և նրանց հետ Հայաստանի հաջող համագործակցությունը:

«Արևելքի հետ հարաբերություններ» ընկերության նախագահ Դ. Շպերլինգը երկար տարիներ եղել է «Կովկաս» խմբի փոխնախագահը և ԳՍԴԿ-ի անդրկովկասյան տարածաշրջանի պատասխանատուն: Շպերլինգը 28 տարի շարունակ Բունդեսթագի պատգամավոր էր, նրա՝ որպես քաղաքական գործչի ներկայիս ակտիվությունը որոշակի ազդեցություն ունի Հայաստանի հետ Գերմանիայի պաշտոնական դիրքորոշումների ձևավորման վրա, որոշակի է նրա դերը հայ-գերմանական քաղաքական երկխոսության կայացման ու ծավալման գործում:

Որպես Բունդեսթագի «Կովկաս» միջխորհրդարանական խմբի փոխնախագահ՝ Դ. Շպերլինգը Հայաստան է այցելել 1996 թ. նոյեմբերին և 1997 թ. հուլիսին, հանդիպել ՀՀ Նախագահի, ԱԺ խոսնակի, ԱԳ նախարարի հետ: Նա է խորհրդարանական մակարդակով կազմակերպել բազմակողմ հանդիպումներ՝ նվիրված Անդրկովկասի զարգացման հեռանկարներին, ինչպես նաև տարածաշրջանային հակասությունների խաղաղ կարգավորմանը, փոխադարձ վստահության ձևավորմանը: Դրանց թվում է 1998 թ. մարտին Բոննում կայացած հանդիպումը, որի ժամանակ կազմակերպվեց Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ քննարկումների շարք՝ Հելսինկիի քաղաքացիական վեհաժողովի հետ: Դրա աշխատանքներին մասնակցում էին ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահները, Բոննում հավատարմագրված Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի դեսպանները, գերմանական պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Իսկ 1998 թ. դեկտեմբերին Մայնի Ֆրանկֆուրտում ԳԴՀ-ում Հայաստանի և Ադրբեջանի դեսպանների մասնակցությամբ կայացավ բանավեճ-քննարկում՝ նվիրված ԼՂՀ հիմնախնդրին:

Դ. Շպերլինգը, վերջին տարիներին մեծ հետաքրքրություն ցուցաբերելով հիմնահարցի կարգավորման նկատմամբ, համառորեն փնտրում է դրա լուծման ճանապարհները, կատարում առաջարկություններ: Նա 1997 թ. սեպտեմբերին հետևել է ՀՀ-ում նախագահական ընտրություններին՝ դիտորդի կարգավիճակով: Շպերլինգի տեսակետը ԼՂ-ի հիմնախնդրի վերաբերյալ ոչնչով չի տարբերվում Գերմանիայի պաշտոնական դիրքորոշումից, որի էությունը հետևյալն է. ինքնավարություն Ադրբեջանի կազմում՝ պահ-պանելով վերջինիս տարածքային ամբողջականությունը: Նա նման տեսակետի է հանգել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանն իր տարածքային ամբողջականությունից երբեք չի հրաժարվի, և որ միջազգային հանրությունը կշարունակի հարգել տարածքային ամբողջականության սկզբունքը: Նա «մոռանում է», իսկ ավելի ճիշտ՝ անտեսում այն, որ ՀՀ-ն ու ԼՂ-ն երբեք չեն համաձայնվի, որ Արցախը լինի Ադրբեջանի կազմում, և որ միջազգային հանրությունը ճանաչում է նաև ազգերի ինքնորոշումը: Եթե ԼՂ հիմնախնդրի վերաբերյալ տեսակետները պաշտոնականի հետ համահունչ են, ապա դրա կարգավորման բնագավառում նկատվում է որոշ տարբերություն:

Շպերլինգը քննադատում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերը, հանձին Ֆ. Լամբախի՝ որպես վստահություն չներշնչողի, առաջարկում հիմնախնդրի լուծման իր տարբերակը, այն է՝ երկարատև գործընթաց՝ մանր քայլերով, մինչև վստահության մթնոլորտը կարգավորվի կողմերի միջև:

Դ. Շպերլինգը ԼՂ հիմնախնդիրը դիտարկում է «Կովկասյան» տարածաշրջանի հակամարտությունների համատեքստում: Ըստ նրա՝ Կովկասի ժողովուրդները պետք է գիտակցեն տարածաշրջանի խնդիրների փոխկապակցվածությունը և պատրաստ լինեն համատեղ գործունեության: Դրան հասնելու համար նա անհրաժեշտ է համարում Ստրասբուրգի օրինակով ստեղծել «Մարդու իրավունքների կովկասյան դատարան» կամ հիմնադրել փոքրամասնության իրավունքների պաշտպանության ժողովրդավարական գրասենյակ:

1997 թ. օգոստոսից մինչև 1999 թ. մայիսը կարևոր հանդիպումներ տեղի ունեցան ՀՀ-ի, ԼՂ-ի և ԳԴՀ-ի բարձրաստիճան պաշտոնյաների միջև Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ) գործունեության շրջանակներում: ԼՂՀ վարչապետ Լ. Պետրոսյանը 1997 թ. օգոստոսի 21-ին ընդունեց Ֆ. Լամբախին: Հայտնելով իրենց տեսակետները՝ կողմերը համակարծիք եղան համաձայնագրի կնքումը փոխզիջումների ընդունմամբ պայմանավորելու հարցում[6]: ԵԱՀԿ Մինսկի խմբում Գերմանիայի ներկայացուցիչ Ֆ. Լամբախին 1997 թ. օգոստոսի 25-ին ընդունեց ՀՀ Նախագահը:

1998 թ. մայիսի 3-6-ը տեղի ունեցավ ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի պաշտոնական այցը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն[7]: Նա հանդիպեց ԳԴՀ ԱԳ նախարար Կ. Քինկելի հետ, ստորագրվեցին երեք փաստաթղթեր՝ երկկողմ համատեղ հայտարարություն փոխհարաբերությունների հիմունքների մասին, միջկառավարական հարաբերություններ օդային հաղորդակցության վերաբերյալ և համաձայնագիր ՀՀ կառավարության կողմից ԳԴՀ-ին մշակույթի արժեքների փոխանցման վերաբերյալ: 1998 թ. մայիսի 6-ին ԳԴՀ ԱԳՆ «Աշխարհի դահլիճ» անունը կրող պալատի սրահում տեղի ունեցավ գերմանական մշակութային արժեքների փոխանցման հանդիսավոր արարողությունը[8], որտեղ Վ. Օսկանյանը Գերմանիայի արտաքին գերատեսչության ղեկավար Կ. Քինկելին պաշտոնապես հանձնեց 575 գերմանական ձեռագրեր[9]: Հայաստանի Ազգային ակադեմիայի գրադարանի տնօրենը գերմանական լրատվամիջոցներից մեկի հետ ունեցած հարցազրույցում նշել է, որ դրանք Երկրորդ աշխարհամարտի և հետպատերազմյան առաջին տարիների ընթացքում 1948 թ. Լենինգրադից տեղափոխվել են Երևան, այնուհետև՝ Գերմանիա[10]: Վերջինիս հանձնված 575 ձեռագրերը, սկսած 1442 թվականից, հարստացվել են նորերով՝ 1490, 1501 թթ., XVI-XIX դդ. ընկած ժամանակահատվածի նմուշներով[11]: Գերմանական մշակութային արժեքների հաջորդ խմբաքանակը Երևանից Բրեմենի նավահանգիստ հասավ 2000 թ. օգոստոսի 10-ին. տեղափոխվել էր 444 արկղ կազմող շուրջ 18.000 կտոր գերմանա-

---

[6] Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն 1997, Ներքին, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն, Ե., 2002, էջ 107:

[7] *ADK, Nr. 100 Jg. 1998/ Heft 2, S. 52.*

[8] Այդ մասին տե՛ս *Reinische Post, 4. Mai 1998; Frankfurter Allgemeine Zeitung , 5. Mai 1998; Der Tagesspiegel, Berlin, 5. Mai 1998.*

[9] *Frankfurter Allgemeine Zeitung, 5. Mai 1998,* ինչպես նաև *Der Tagesspiegel, Berlin, 5. Mai 1998.*

[10] *Badische Zeitung, 6. Mai 1998,* ինչպես նաև *Reinische Post 7. Mai 1998.*

[11] *Reinische Post, Montag, 4. Mai 1998.*

կան ռազմավարային գրականություն: Ձեռագրերը Գերմանիային հանձնելու առթիվ հնչեց Կ. Քինկելի շնորհակալական խոսքը: Նա ասաց, որ ինքը Հայաստանը գիտե ոչ լսածով: 1995 թ. դեկտեմբերին անձամբ եղել է Հայաստանում: Վ. Օսկանյանը պաշտոնական այցի ընթացքում հանդիպումներ ունեցավ ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարար Կ.-Դ. Շպրանգերի, ԵԱՀԿ Մինսկի խմբի Գերմանիայի ներկայացուցիչ, դեսպան Ֆ. Լամբախի, Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Կ.-Հ. Հորհուսի, □Կովկաս□ խորհրդարանական խմբի նախագահ Վ. Վիմմերի, գերմանական հայտնի ընկերությունների ներկայացուցիչների հետ[12]: Գերմանիայի արտգործնախարար Կ. Քինկելի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր և տարածաշրջանային խնդիրներ[13]: 1998 թ. մայիսի 7-ին ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը մամլո ասուլիսում ներկայացրեց Գերմանիա կատարած այցի արդյունքները: Արտգործնախարարը հատկապես ընդգծեց, որ հայկական կողմը բարձրացրել է հայերի ցեղասպանության ճանաչման հարցը, որն ըմբռնումով է ընդունվել: Գերմանական կողմին ներկայացվել է նաև ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ Հայաստանի նոր դիրքորոշումը՝ ելնելով հիմք ընդունած Թուրքիայի մերժողական քաղաքականությունից ինչպես Հայոց ցեղասպանության ճանաչման, այնպես էլ ԼՂ հարցում, մեղմ ասած, Թուրքիայի ոչ կառուցողական դիրքորոշումից, քանզի նա համառորեն պահանջում է թողնել ԼՂ-ն Ադրբեջանի կազմում, ՀՀ-ի նկատմամբ կիրառել դիվանագիտական մեկուսացման, չճանաչման, բացահայտորեն մերժող և տնտեսական շրջափակման քաղաքականություն[14]:

1999 թ. նոյեմբերի 19-23-ին աշխատանքային այցով Գերմանիայում էր ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Նա հանդիպումներ ունեցավ ԳԴՀ փոխվարչապետ, արտգործնախարար Յ. Ֆիշերի, Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հ. Քլոզեի, Բունդեսթագի գերմանակովկասյան խմբի ղեկավարության, ինչպես նաև գերմանական ներդրումների և զարգացման ընկերության պատասխանատուների հետ:

ՀՀ արտաքին գործերի գերատեսչությունը 1999 թ. հանդիպեց որոշակի դժվարությունների, երբ ԵԱՀԿ ղեկավարությունը նախատեսեց հերթական գագաթնաժողով անցկացնել Թուրքիայի մայրաքաղաք Ստամբուլում: Այդ կապակցությամբ Վ. Օսկանյանը առաջարկեց ԼՂՀ հարցի փաթեթային լուծում առանց նախապայմանների՝ բացառելով Ադրբեջանի կազմում ԼՂ ինքնավարության կարգավիճակը, ինչպես նաև հարցի փուլային լուծումը՝ պնդելով, որ ԼՂՀ-ն ճանաչվի որպես բանակցային կողմ: Վ. Օսկանյանը նշեց, որ 1999 թ. ԵԱՀԿ-ի հերթական գագաթնաժողովի անցկացումը Ստամբուլում անհնար է, քանի որ Թուրքիան շարունակում

---

[12] *ADK, Nr. 100 Jg. 1998/Heft 2, S. 14-15.*

[13] Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն 1999, Ներքին, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն, Ե., 2002, էջ 120:

[14] *Badische Zeitung, 6. Mai 1998,* Ý³¨ *Reinische Post, 7. Mai 1998.*

է ՀՀ-ին չճանաչելու քաղաքականություն, մերժում հայկական կողմի առաջարկները՝ առանց նախապայմանի հաստատել դիվանագիտական հարաբերություններ, դրանով իսկ կարգավորել միջպետական առնչությունները: Թուրքիան թերանում է կարևորել մարդու իրավունքների և ազատությունների մասին եվրոպական հիմնարար արժեքները, հետևապես չի կարող դառնալ գագաթնաժողովի անցկացման վայր, մանավանդ որ այնտեղ նախատեսվում է ընդունել հիմնարար փաստաթուղթ՝ XXI դարի Եվրոպական անվտանգության խարտիան, որը պետք է կոչվի Եվրոպական անվտանգության ստամբուլյան խարտիա: Այնուամենայնիվ, ԵԱՀԿ Ստամբուլի գագաթնաժողովը տեղի ունեցավ 1999 թ. նոյեմբերի 18-19-ին, որի արդյունքներն ամփոփեց ԳԴՀ կառավարությունը: Այնտեղ նշված է, որ ԵԱՀԿ մասնակից երկրների պետությունների և կառավարությունների ղեկավարների ընդունած Եվրոպական անվտանգության խարտիայի էական բաղկացուցիչն է «կոոպերատիվ անվտանգության ծրագրահիմքը», որը նպատակ է հետապնդում հոգ տանելու ԵԱՀԿ և այլ միջազգային կազմակերպությունների միջև համագործակցության համար, որով պետք է զարգացվի ԵԱՀԿ-ի դերը խաղաղության պահպանման գործում:

Աշխատանքային հերթական այցը արտգործնախարարը կատարեց Գերմանիա 2000 թ. նոյեմբերին. նա մասնակցեց «Հերբերտ Քվանտ» հիմնադրամի կողմից Բեռլինում կազմակերպված «Եվրոպան XXI դարում» խորհրդաժողովին: Խորհրդարանականների հանդիպումները և փոխայցելությունները դարձան համակարգված՝ նպաստելով երկու երկրների ու ժողովուրդների մերձեցմանը և փոխըմբռնմանը: Հատկապես 2000 թ.-ից Բունդեսթագը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում հարավկովկասյան տարածաշրջանի երկրների նկատմամբ, որի մասին են վկայում 2000-2001 թթ. ընթացքում միջխորհրդարանական համագործակցության զարգացմանը նպաստող Հայաստան և Հարավային Կովկաս գերմանական խորհրդարանական պատվիրակությունների երկկողմ այցերը: 2004 թ. մայիսի 13-ին Բունդեսթագի Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական խմբի անդամներին (Ք. Բերգների գլխավորությամբ) ընդունեց ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը:

Երկկողմ միջգերատեսչային քաղաքական խորհրդակցությունները նույնպես կարևոր են համագործակցության հետագա զարգացման համար: Նման խորհրդակցություն առաջին անգամ հրավիրվել է երկու երկրների ԱԳՆ-երի միջև 2002 թ. սեպտեմբերին Երևանում:

Ուշադրության արժանի է երկու երկրների համագործակցությունը միջազգային կազմակերպություններում: Դրա համոզիչ օրինակն է այն, որ 1998 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի մշակած՝ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու պատժի մասին» կոնվենցիայից բխող բանաձևի նախագիծն ընդունելուն միացել է նաև Գերմանիան, որը, ի դեպ, ներկայացվել է հայկական պատվիրակության առաջարկությամբ:

Գերմանիան, ձեռնպահ մնալով, չի աջակցել 2001 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում քննարկվող ԵԱՀԿ-ՄԱԿ համագործակցության մասին բանաձևում Ադրբեջանի ուղղումին: Դրան համապատասխան՝ գերմանական կողմը մշտապես ստանում է Հայաստանի աջակցությունն առանձնապես

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամության տեղի համար:

Անշուշտ, կարևոր ու հրատապ է հայ-գերմանական ռազմաքաղաքական համագործակցությունը: Դեռևս 2002 թ. նոյեմբերին Հայաստանում համատեղության կարգով հավատարմագրվել են Ռուսաստանում ԳԴՀ պաշտպանության հարցերով կցորդ, բրիգադի գեներալ Դ. Շաֆրանեկը և ցամաքային հարցերով ռազմական կցորդ, գնդապետ Ե. Առթը: Նրանք համագործակցության հեռանկարում մշակել են □Գործընկերություն հանուն խաղաղության□ մի ծրագիր՝ դրանում ընդգրկելով ռազմական բժշկության, տեղեկատվության փոխանակման և ռազմական կրթության բնագավառները:

Հայ-գերմանական միջպետական հարաբերությունների պատմության համար ուշագրավ էին ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի երեք պաշտոնական այցերը Գերմանիա և հանդիպումները ԳԴՀ բարձրաստիճան գործիչների հետ: 2003 թ. հունվարի 14-15-ը կայացավ նրա առաջին այցը Գերմանիա, որը նպաստեց երկկողմ քաղաքական հարաբերությունների զարգացմանը, նկատելիորեն աշխուժացրեց տնտեսական առնչությունները և, անկասկած, նոր մակարդակի բարձրացրեց երկու երկրների միջպետական հարաբերությունները[15]:

Նախագահի առաջին այցին 2004 թ. հունիսին հաջորդեց ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի այցելությունը Գերմանիա: Նա հայ-գերմանական տնտեսական համաժողովի բացմանը նվիրված ելույթում ասաց, որ Հայաստանի Հանրապետությունում ԳԴՀ-ի հետ իրականացվող տնտեսական առողջ կապերը և պետական մարմինների լիարժեք գործունեությունը թույլ են տալիս տարածաշրջանում Հայաստանը որակավորել որպես առաջավոր, կազմակերպված երկիր[16]:

2004 թ. նոյեմբերի 17-ին Ռ. Քոչարյանը եռօրյա աշխատանքային այցով նորից ժամանեց Բեռլին և հանդիպում ունեցավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Գ. Շրյոդերի հետ[17]: Գ. Շրյոդերը, պատասխանելով «Մեդիամաքս» գործակալության հատուկ թղթակցի հարցին, ասաց. «Հայաստանի և Գերմանիայի միջև չկան քաղաքական խընդիրներ, և երկու երկրները կապված են բարեկամական հարաբերություններով»[18]: Պատասխանելով Հայաստանի տնտեսության մեջ գերմանական ներդրումների ավելացման հեռանկարների հարցին՝ նա նշեց, որ դրանք մեծապես կախված են Հայաստանում տնտեսական բարեփոխումների շարունակական գործընթացից, ինչպես նաև արտասահմանյան ներդրումների համար կայուն երաշխիքների ապահովումից:

Ռ. Քոչարյանը հանդիպեց նաև Գերմանիայի նորընտիր նախագահ Հ. Քյոլերին: Վերջինս նշեց, որ Գերմանիայի կողմից Հայաստանում անցկացվող ծրագրերը նպաստում են նաև Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի քաղաքական կայունությանն ու տնտեսական առաջըն-

---

[15] *ADK, Nr. 118 Jg. 2002/Heft 4, S. 13-14.*
[16] *Голос Армении, 26.VII.2004.*
[17] *ADK, Nr. 125/126 Jg. 2004, Heft 3&4, S. 13.*
[18] Հայաստանի Հանրապետություն, 18.XI.2004:

թացին[19]: Ռ. Քոչարյանն իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեց Հ. Քյոլերին Հայաստանին ցուցաբերվող օգնության համար՝ նըշելով առանձնապես համագործակցությունն էներգետիկայի, ջրային տընտեսության և արտադրական ենթակառուցվածքների ոլորտում, ինչպես նաև գերմանական KfW (Վերականգնման վարկերի բանկ - Խ. Ա.) բանկի աջակցությամբ իրականացվող փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրրագրի հարցում: Նա նշեց, որ այդ բանկը և Հայաստանի կառավարությունը քննարկում են հիպոթեկային վարկավորման շուկայի զարգացման նախագիծը: Հանրապետության նախագահի կարծիքով, աճում է գերմանացի մասնավոր ներդրողների հետաքրքրությունը հայկական տնտեսության նկատմամբ, ըստ որում, ներդրումները հատկապես օգնում են տեղեկատվական տեխնոլոգիաների և հանքարդյունաբերության զարգացմանը, միաժամանակ ակնկալվում են նաև գերմանական կապիտալի փոխշահավետ նոր ներդրումներ[20]:

Հայ-գերմանական դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, փոխադարձ հանդիպումները, առևտրատնտեսական կապերի ընդլայնումը, մշակութային համագործակցության խորացումը նպաստեցին, որ Գերմանիան ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերի Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ, և որ Բունդեսթագը 2005 թ. հունիսի 16-ին ընդունի ու դատապարտի Հայոց ցեղասպանության իրողությունը[21]:

Գերմանիան, 2004 թ. տվյալներով, մեր երկրում արտասահմանյան ամենամեծ ներդրողն է: Գերմանական ներկայությունն առկա է հատկապես Քաջարանի պղնձամոլիբդենային, հայ-ռուսական «Արմենալում», Bertelsmann հայտնի մեդիա կոնցեռնի LYCOS համակարգչային ծրագրում: Գերմանիան Միացյալ Նահանգներից հետո Հայաստանի երկրորդ խոշոր դոնորն է, որը տեխնիկական համագործակցության շրջանակներում համատեղ իրականացնում է 20-ից ավելի ծրագրեր, հաջող է գործում գերմանա-հայկական հիմնադրամը, որով պահպանվել կամ ստեղծվել են շատ աշխատատեղեր:

2006 թ. մարտի 1-ին աշխատանքային այցով Բեռլինում գտնվող Հայաստանի ԱԳ նախարար Վ. Օսկանյանը մի շարք հանդիպումներ ունեցավ ԳԴՀ բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես ԳԴՀ արտգործնախարար Ֆրանկ-Վալտեր Շթայնմայերի հետ: Նախարարներն անդրադարձան Հարավային Կովկասում առկա խնդիրներին: Քննարկվեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացը, որի առթիվ Վ. Օսկանյանը նկարագրեց բանակցության առկա փուլը, հարցերի կարգավորման նկատմամբ Հայաստանի մոտեցումները: Վ. Օսկանյանն ասաց, որ Հայաստանը գտնում է, որ Լեռնային Ղարաբաղի հարցը հնարավոր է կարգավորել միայն խաղաղ ճանապարհով և փոխադարձ զիջումներով, որի համար երկու կողմերից պահանջվում է վճռականություն և քաղաքական կամք:

---

[19] Տե՛ս *Die Welt, 19.11.2004.*

[20] Հայաստանի Հանրապետություն, 17.XI.2004:

[21] Այդ մասին տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի» (Խաչատուրյան Ա. Ծ.՝ ԳԴՀ Բունդեսթագի՝ Հայոց ցեղասպանության մասին բանաձևի քննախոսություն), Ե., 3(120) 2006, էջ 195-204:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ լուծումը պաշտպանում է Գերմանիան: Այդ մասին Բաքվում 2006 թ. օգոստոսի 30-ին մամուլի ասուլիսում հայտարարել է Ադրբեջանում ԳԴՀ-ի նորանշանակ դեսպան Պ. Ստանցիշան: Նրա խոսքերով, այդ դիրքորոշումը ձևավորվել է շատ տարիներ առաջ, որը հայտնի է նաև Ադրբեջանինն[22]: Կարևոր նշանակություն է տրվում եվրոպական երկրների կողմից Հայաստանին ուղղված քաղաքականության մեջ եվրոպական երկրների և Հայաստանի համագործակցությանը: Այդ քաղաքականության լույսի ներքո 2006 թ. մարտին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի այցը Գերմանիա, իսկ 2006 թ. մարտի 8-12-ին Երևանում անցկացվել է հայ-գերմանական բիզնես համաժողով, Երևան են այցելել 22 խոշոր կազմակերպությունների ներկայացուցիչներ: 2006 թ. շարունակվել են նախարարների երկկողմ խորհրդակցությունները ռազմական գործակցության վերաբերյալ: Ուշագրավ է, որ 2006 թ. նոյեմբերի 15-17-ը ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի՝ ԳԴՀ կատարած երրորդ այցի նախօրեին Գերմանիան ստանձնել է Եվրախորհրդում նախագահելու պարտականությունը: Հենց այդ ժամանակ կարևորվել է «Նոր հարևանություն» ծրագրի իրականացումը՝ նկատի ունենալով Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանները:

ՀՀ-ում ԳԴՀ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Վիկտորինը Գերմանիայի միասնության 17-րդ տարեդարձի կապակցությամբ ողջույնի խոսքում հայտնում էր, որ «Զարգացման երկկողմ համագործակցության բնագավառում Գերմանիան Ամերիկայի Միացյալ Նահանգներից հետո Հայաստանի երկրորդ խոշոր դոնորն է: 2007 թ. սեպտեմբերի 11-ին և 12-ին Երևանում կայացան միջկառավարական բանակցություններ, որոնց արդյունքում հայկական կողմին հատկացվեցին 79,5 մլն եվրո արժողության միջոցներ: Այսպիսով, զարգացման համագործակցության ոլորտում գերմանական աջակցության ողջ ծավալը Հայաստանի անկախացումից հետո կազմում է մոտ 265 մլն եվրո: Ընդսմին, մեր ծրագրերի աշխարհագրությունը տարածվում է տնտեսական և վարչարարական օրենսդրության ոլորտում օրենքների վերամշակման աջակցությունից մինչև փոքր ու միջին ձեռնարկությունների և Հայաստանում հիպոթեկային շուկայի զարգացմանն ուղղված քայլերը»[23]:

2008 թ. փետրվարի 5-ին ԱԺ նախագահ Տ. Թորոսյանն ընդունել է Հայաստանում ԳԴՀ-ի դեսպան Անդրեա Վիկտորինին: Տ. Թորոսյանը Վիկտորինին հայտնեց, որ արդեն Հայաստանի Ազգային ժողովում ստեղծվել է Բունդեսթագի հետ պատգամավորական բարեկամական նոր խումբ: Ճիշտ է, խորհրդարանական կապերն առայժմ թույլ են, սակայն չորրորդ գումարման Ազգային ժողովը կուղղի այդ բացը: Նախագահը նշեց նաև, որ առկա են համագործակցության մեծ հնարավորություններ, դրանում հաշվի է առնվում եվրաինտեգրումը, որը Հայաստանի արտաքին քաղաքական գերակայությունն է, երկու երկրների անդամակցումը միջազգային կառույցներին, որտեղ առկա են համագործակցության լուրջ հեռանկարներ, Եվրախորհրդարանում Բունդեսթագի ներկայացվածությունը: Հանդիպման ժամանակ քննարկվեցին Բունդեսթագի «Միջազգա

[22] Հայաստանի Հանրապետություն, 31.VII.2006:
[23] Ազգ (Հավելված), 3.X.2007:

յին խորհրդարանական կրթաթոշակ» ծրագրին վերաբերող հարցերը: Ծրագրում ընդգրկված են 25 երկրներ:

Հայ-գերմանական դիվանագիտական-քաղաքական հարաբերությունները շարունակում են ընթանալ ՄԱԿ-ի Եվրամիության, Եվրախորհրդի, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի և այլ միջազգային հեղինակավոր մարմինների գործունեության շրջանակներում: Ակնառու է Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահի, կանցլերի, խորհրդարանականների, կառավարությունների, բարձրաստիճան պաշտոնյաների պարբերական հանդիպումների նշանակությունը՝ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող խնդիրների լուծման ուղղությամբ:

Դիվանագիտական հարաբերությունները և «դե յուրե» ճանաչումը կարևորագույն գործոն են ՀՀ-ի և ԳԴՀ-ի միջև քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային առնչությունները վերընթաց գծով զարգացնելու համար: ՀՀ և ԳԴՀ 17-ամյա միջպետական հարաբերությունները վկայում են, որ բարի կամքի և փոխշահավետության գործընթացում կարող են սերտորեն հարաբերվել Եվրոպայի ամենազարգացած երկրներից մեկը՝ ԳԴՀ-ն, և անցումային շրջանում գտնվող, անկախության ճանապարհով ընթացող և իր տարածքով ու բնակչությամբ համեստ Հայաստանի Հանրապետությունը:

ИЗ ИСТОРИИ ДИПЛОМАТИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ МЕЖДУ РА И ФРГ

ХАЧАТУРЯН А. В.

Резюме

Установление межгосударственных отношений между РА и ФРГ полностью соответствует интересам этих стран. Германия, являясь ведущей европейской державой, влиятельной страной в европейских структурах – Евросоюзе и Евросовете, помогает Армении занять достойное место на международной арене.

ФРГ официально признала РА в декабре 1991 года, а в январе 1992 года были установлены дипломатические отношения на уровне посольств, что стало основополагающим фактором для двустороннего политического, экономического и культурного развития. Немецкая общественность высоко оценила добрый жест и волю РА, передавшей немецкой стороне 575 рукописей, принадлежавших видным деятелям немецкой культуры.

В деле укрепления и взаимовыгодного сотрудничества между РА и ФРГ большую роль играют официальные визиты, межпарламентские связи и периодические встречи между парламентариями и высокопоставленными лицами двух государств.